ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՊՁԲ-18/9

ք.Կապան «01» հունիս 2018թ.

Կապանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Աշոտ Հայրապետյանի, որը գործում է ՏԻՄ օրենքի և կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Ա/Ձ Արթուր Մաթևոսյանի, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4. Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 1857400/մեկ միլիոն ութ հարյուր հիսունյոթ հազար չորս հարյուր/ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն

իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
Կապանի համայնքապետարան	**ՎԱՃԱՌՈՂ**
Քաղ. Կապան, Ա.Մանուկյան 5ա	Ա/Ձ Արթուր Մաթևոսյան
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Քաղ. Կապան,Մ.Ստեփանյան43-18
ՀՀ 900312241038	Ամերիաբանկ
ՀՎՀՀ 09426088	ՀՀ 1570014108750100
	ՀՎՀՀ 78637352
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 01 » հունիս 2018 թ. կնքված
<<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՊՁԲ-18/9>> ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ապրանքի											
									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը
1	34331300-4	Ռադիատոր/радиатор/ յուղի	Գերմանիա	նախատեսված է Մերսեդես Բենց ML350 մեքենայի համար, օրիգինալ, գործարանային	հատ	35000	35000	1	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	1	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15-ը, համաձայն պատվիրատուի կողմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/
2	34331300-5	Պաշտպանիչ հետևի	Գերմանիա	նախատեսված է Մերսեդես Բենց ML350 մեքենայի համար, օրիգինալ, գործարանային	հատ	65000	130000	2	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	2	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15-ը, համաձայն պատվիրատուի կողմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/
3	34331300-11	Հոսանքի կարգավորման սնուցման բլոկ/տուփ/	Գերմանիա	նախատեսված է Մերսեդես Բենց ML350 մեքենայի համար, օրիգինալ, գործարանային	հատ	320000	320000	1	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	1	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15-ը, համաձայն պատվիրատուի կողմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/
4	34331300-15	Կափարիչի միջադիր /прокладка крышки/	Ճապոնիա	նախատեսված է Ջիպ-Պաջերո Միթսուբիշի մեքենայի համար, գործարանային	հատ	7000	7000	1	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	1	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15-ը, համաձայն պատվիրատուի կողմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/
5	34331300-16	Գլխիկի միջադիր /прокладка головки/	Ճապոնիա	նախատեսված է Ջիպ-Պաջերո Միթսուբիշի մեքենայի համար, գործարանային	հատ	8000	8000	1	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	1	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15-ը, համաձայն պատվիրատուի կողմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/
6	34331300-18	Ատամնավոր փոկանիվ/ролик зубчат. ремни/	Ճապոնիա	նախատեսված է Ջիպ-Պաջերո Միթսուբիշի մեքենայի համար,	հատ	10000	10000	1	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա.	1	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15-ը, համաձայն պատվիրատուի կողմից տրված

				գործարանային Ատամնավոր փոկանիվ շարժիչի					Մանուկյան 5ա		պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/
7	34331300-19	Կայծառ/свеча/	Գերմանիա	նախատեսված է Ջիպ-Պաջերո Միթսուբիշի մեքենայի համար, գործարանային	հատ	2000	8000	4	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	4	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15-ը, համաձայն պատվիրատուի կողմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/
8	34331300-21	Շարժիչի փոկ/ремень/	Ճապոնիա	նախատեսված է Ջիպ-Պաջերո Միթսուբիշի մեքենայի համար, գործարանային	հատ	2900	2900	1	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	1	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15-ը, համաձայն պատվիրատուի կողմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/
9	34331300-26	Խցուկ հարվածիչի /сальник раздатки/	Ճապոնիա	նախատեսված է Ջիպ-Պաջերո Միթսուբիշի մեքենայի համար, գործարանային նախատեսված է փոխանցման տուփի համար	հատ	5000	5000	1	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	1	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15-ը, համաձայն պատվիրատուի կողմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/
10	34321121-2	Յուղի ֆիլտր	Թայվան	նախատեսված է Ջիպ-Պաջերո Միթսուբիշի մեքենայի համար, գործարանային	հատ	2500	2500	1	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	1	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15-ը, համաձայն պատվիրատուի կողմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/
11	34331300-27	Բոմբ	Ճապոնիա	նախատեսված է Ջիպ-Պաջերո Միթսուբիշի մեքենայի համար, գործարանային	հատ	5000	20000	4	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	4	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15-ը, համաձայն պատվիրատուի կողմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/
12	34331300-28	Կովրիկ	Չինաստան	նախատեսված է Ջիպ-Պաջերո Միթսուբիշի մեքենայի համար, գործարանային ներառում է հետևի և առջևի 4 կովրիկները	կոմպլեկտ	14000	14000	1	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	1	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15-ը, համաձայն պատվիրատուի կողմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/
13	34331300-29	Դիմացի լամպեր	Գերմանիա	նախատեսված է Ջիպ-Պաջերո Միթսուբիշի մեքենայի համար, գործարանային	հատ	20000	40000	2	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	2	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15-ը, համաձայն պատվիրատուի կողմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/
14	34331300-31	Ղեկային կալոնկա	Ճապոնիա	նախատեսված է Ջիպ-Պաջերո Միթսուբիշի մեքենայի համար, գործարանային	հատ	180000	180000	1	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	1	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15-ը, համաձայն պատվիրատուի կողմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող

											5 աշխատանքային օրվա ընթացքում/
15	34331300-32	Լույսերի գիտառ	Ճապոնիա	Նախատեսված է Ջիպ-Պաջերո Միթսուբիշի մեքենայի համար, գործարանային	հատ	70000	70000	1	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	1	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15-ը, համաձայն պատվիրատուի կողմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/
16	34331300-33	Տրամլյոր	Ճապոնիա	Նախատեսված է Ջիպ-Պաջերո Միթսուբիշի մեքենայի համար, գործարանային	հատ	70000	70000	1	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	1	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15-ը, համաձայն պատվիրատուի կողմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/
17	34331300-34	Անվադողեր 265*70*15	Չինաստան	Նախատեսված է Ջիպ-Պաջերո Միթսուբիշի մեքենայի համար, անվադողեր 260*70*15, ձմեռային	հատ	55000	220000	4	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	4	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15-ը, համաձայն պատվիրատուի կողմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/
18	34331300-35	Հսպակի վռան հետևի/втулка рессоры задняя/	Գերմանիա	Նախատեսված է Ջիպ-Պաջերո Միթսուբիշի մեքենայի համար, գործարանային	հատ	1000	12000	12	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	12	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15-ը, համաձայն պատվիրատուի կողմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/
19	34331300-36	Կիսասռնու խցուկ հետևի/сальник полуоси задняя/	Ճապոնիա	Նախատեսված է Ջիպ-Պաջերո Միթսուբիշի մեքենայի համար, գործարանային	հատ	4000	4000	1	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	1	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15-ը, համաձայն պատվիրատուի կողմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/
20	34331300-37	Հսպակի թերթերկաթի պլաստմասս/пласт масса листа рессоры/	Չինաստան	Նախատեսված է Ջիպ-Պաջերո Միթսուբիշի մեքենայի համար, գործարանային	հատ	500	4000	8	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	8	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15-ը, համաձայն պատվիրատուի կողմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/
21	34331300-38	Առջևի կայունարարի/стабилизатор/ ռեզին	Ճապոնիա	Նախատեսված է Ջիպ-Պաջերո Միթսուբիշի մեքենայի համար, գործարանային	հատ	2000	4000	2	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	2	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15-ը, համաձայն պատվիրատուի կողմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/
22	34331300-39	Առջևի կայունարարի/стабилизатор/ կանգնակ	Ճապոնիա	Նախատեսված է Ջիպ-Պաջերո Միթսուբիշի մեքենայի համար, գործարանային	հատ	5000	10000	2	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	2	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15-ը, համաձայն պատվիրատուի կողմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/

23	34331300-40	Առջևի ամորտիզատորի ականոց/втулка/	Ռուսաստան	նախատեսված է Ջիպ-Պաջերո Միթսուբիշի մեքենայի համար, գործարանային	հատ	2000	4000	2	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	2	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15-ը, համաձայն պատվիրատուի կողմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/
24	34331300-41	Մայատնիկ առաջնամասի	Ճապոնիա	նախատեսված է Ջիպ-Պաջերո Միթսուբիշի մեքենայի համար, գործարանային	հատ	15000	15000	1	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	1	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15-ը, համաձայն պատվիրատուի կողմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/
25	34331300-42	Գրանատի ներսի ծածկոց	Ճապոնիա	նախատեսված է Ջիպ-Պաջերո Միթսուբիշի մեքենայի համար, գործարանային	հատ	4000	8000	2	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	2	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15-ը, համաձայն պատվիրատուի կողմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/
26	34331300-43	Շառավոյ ներքևի	Ճապոնիա	նախատեսված է Ջիպ-Պաջերո Միթսուբիշի մեքենայի համար, գործարանային	հատ	10000	20000	2	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	2	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15-ը, համաձայն պատվիրատուի կողմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/
27	34331300-44	Շառավոյ վերևի	Ճապոնիա	նախատեսված է Ջիպ-Պաջերո Միթսուբիշի մեքենայի համար, գործարանային	հատ	8000	16000	2	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	2	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15-ը, համաձայն պատվիրատուի կողմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/
28	34331300-45	Անվադողի տափօղակ/гайка/ գայկա	Չինաստան	նախատեսված է Ջիպ-Պաջերո Միթսուբիշի մեքենայի համար, գործարանային	հատ	1000	4000	4	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	4	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15-ը, համաձայն պատվիրատուի կողմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/
29	34331300-46	Անվադողի շպիլկա	Չինաստան	նախատեսված է Ջիպ-Պաջերո Միթսուբիշի մեքենայի համար, գործարանային	հատ	1000	4000	4	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	4	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15-ը, համաձայն պատվիրատուի կողմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/
30	34331300-47	Կոիլո դիմացի աջի	Չինաստան	նախատեսված է Ջիպ-Պաջերո Միթսուբիշի մեքենայի համար, գործարանային	հատ	25000	25000	1	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	1	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15 համաձայն պատվիրատուի կողմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/
31	34331300-48	Հետևի արգելակման	Ճապոնիա	նախատեսված է Ջիպ-Պաջերո	հատ	25000	50000	2	Կապանի համայնքապետ	2	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15 համաձայն պատվիրատուի

		բարաբան		Միթսուբիշի մեքենայի համար, գործարանային					արան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա		կեղմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/
32	34331300-49	Դիմացի ապակի	Չինաստան	Նախատեսված է Ջիպ-Պաջերո Միթսուբիշի մեքենայի համար, գործարանային	հատ	32000	32000	1	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	1	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15 համաձայն պատվիրատուի կեղմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/
33	34331300-50	Հետևի կամրջակի տալերչնի	Ճապոնիա	Նախատեսված է Ջիպ-Պաջերո Միթսուբիշի մեքենայի համար, գործարանային	հատ	47000	47000	1	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	1	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15 համաձայն պատվիրատուի կեղմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/
34	34331300-51	Կարդան	Ճապոնիա	Նախատեսված է Ջիպ-Պաջերո Միթսուբիշի մեքենայի համար, գործարանային	հատ	35000	35000	1	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	1	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15 համաձայն պատվիրատուի կեղմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/
35	34331300-52	Փոխանցման տուփի 2-րդ լիսեռ/вал/	Ճապոնիա	Նախատեսված է Ջիպ-Պաջերո Միթսուբիշի մեքենայի համար, գործարանային	կոմպլեկտ	28000	28000	1	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	1	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15 համաձայն պատվիրատուի կեղմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/
36	34331300-53	Եռաբաշխիչ/трайник/ ռազդատկայի	Ճապոնիա	Նախատեսված է Ջիպ-Պաջերո Միթսուբիշի մեքենայի համար, գործարանային	հատ	42000	42000	1	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	1	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15 համաձայն պատվիրատուի կեղմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/
37	34331300-54	Առաջնամասի անվակունդ/ступица/	Ճապոնիա	Նախատեսված է Ջիպ-Պաջերո Միթսուբիշի մեքենայի համար, գործարանային	հատ	25000	25000	1	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	1	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15 համաձայն պատվիրատուի կեղմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/
38	34331300-56	Շարժիչի պաշտպանիչ	Ճապոնիա	Նախատեսված է Լեքսուս GX470 մեքենայի համար, գործարանային	հատ	25000	25000	1	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	1	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15 համաձայն պատվիրատուի կեղմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/
39	34331300-62	Անվադող ձմեռային	Ճապոնիա	Անվադող ձմեռային, 275*65*R17, Նախատեսված է Լեքսուս GX470 մեքենայի համար, գործարանային	հատ	60000	240000	4	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	4	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15 համաձայն պատվիրատուի կեղմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/
40	34331300-67	Շարժիչի մոմեր/свеча/	Ճապոնիա	Նախատեսված է Լեքսուս GX470 մեքենայի համար, գործարանային	հատ	2500	20000	8	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	8	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15 համաձայն պատվիրատուի կեղմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող

											5 աշխատանքային օրվա ընթացքում/
41	34331300-70	Խլացուցիչի վերջնամասի կտորը	Կորեա	Նախատեսված է Լեքսուս GX470 մեքենայի համար, գործարանային	հատ	25000	25000	1	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	1	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15 համաձայն պատվիրատուի կողմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/
42	34331300-72	Առջևի կամրջակի վերևի շառավոյ	Ճապոնիա	Նախատեսված է Լեքսուս GX470 մեքենայի համար, գործարանային	հատ	16000	16000	2	Կապանի համայնքապետարան, Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	2	Մինչև 2018թ. դեկտեմբերի 15 համաձայն պատվիրատուի կողմից տրված պահանջարկի/պահանջարկը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում/

Ծանոթություն ՝ Մերսեդես Բենց ML350 մեքենայի տվյալները՝ արտադրություն 2005թ, 200/272 կվտ/ձու, vin4JGBB88E26A0 7571
Ջիպ-Պաջերո Միթսուբիշի տվյալները՝ միթսուբիշի պաջերո -2,5, Արտադրություն 1993թ., vinD0NV32Pj01883, դիզելային/փոխված գազ/
Լեքսուս GX470, մեքենայի տվյալները՝ արտադրություն 2005թ, 193,4/263 կվտ/ձու, vinJBT20XX60102050

ԳՆՈՐԴ

Կապանի համայնքապետարան
Ք. Կապան, Ա.Մանուկյան 5ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900312241038
ՀՎՀՀ 09426088

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

ՎԱՃԱՌՈՂ

Ա/Ձ Արթուր Մաթևոսյան
Ք. Կապան,Մ.Ստեփանյան43-18
Ամերիաբանկ
ՀՀ 1570014108750100
ՀՎՀՀ 78637352

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 01 » հունիս 2018թ. կնքված
<<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՊՁԲ-18/9>> ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝ /ՀՀ դրամ/												
			1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	Ընդամենը
1	34331300-4	Ռադիատոր/радиатор/ յուղի						35000	35000	35000	35000	35000	35000	35000	35000
2	34331300-5	Պաշտպանիչ հետևի						130000	130000	130000	130000	130000	130000	130000	130000
3	34331300-11	Հոսանքի կարգավորման սնուցման բլոկ/տուփ/						320000	320000	320000	320000	320000	320000	320000	320000
4	34331300-15	Կափարիչի միջադիր /прокладка крышки/						7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000
5	34331300-16	Գլխիկի միջադիր /прокладка головки/						8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000
6	34331300-18	Ատամնավոր փոկանիվ/ролик зубчат ремни/						10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000
7	34331300-19	Կայծառ/свеча/						8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000
8	34331300-21	Շարժիչի փոկ/ремень/						2900	2900	2900	2900	2900	2900	2900	2900
9	34331300-26	Խցուկ հարվածիչի /сальник раздатки/						5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000
10	34321121-2	Յուղի ֆիլտր						2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500
11	34331300-27	Բոմբ						20000	20000	20000	20000	20000	20000	20000	20000
12	34331300-28	Կովրիկ						14000	14000	14000	14000	14000	14000	14000	14000
13	34331300-29	Դիմացի լամպեր						40000	40000	40000	40000	40000	40000	40000	40000
14	34331300-31	Ղեկային կալոնկա						180000	180000	180000	180000	180000	180000	180000	180000
15	34331300-32	Լույսերի գիտառ						70000	70000	70000	70000	70000	70000	70000	70000
16	34331300-33	Տրամլյոր						70000	70000	70000	70000	70000	70000	70000	70000
17	34331300-34	Անվադողեր 265*70*15						220000	220000	220000	220000	220000	220000	220000	220000
18	34331300-35	Զսպակի վռան հետևի/втулка рессоры задняя/						12000	12000	12000	12000	12000	12000	12000	12000
19	34331300-36	Կիսասռնու խցուկ հետևի/сальник полуоси задняя/						4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000
20	34331300-37	Զսպակի թերթերկաթի պլաստմասս/пластмасса листа рессоры/						4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000

21	34331300-38	Առջևի կայունարարի/стабилизатор/ ռեզին						4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000
22	34331300-39	Առջևի կայունարարի/стабилизатор/ կանգնակ						10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000
23	34331300-40	Առջևի ամորտիզատորի ականոց/втулка/						4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000
24	34331300-41	Մայատնիկ առաջնամասի						15000	15000	15000	15000	15000	15000	15000	15000
25	34331300-42	Գրանատի ներսի ծածկոց						8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000
26	34331300-43	Շառավոյ ներքևի						20000	20000	20000	20000	20000	20000	20000	20000
27	34331300-44	Շառավոյ վերևի						16000	16000	16000	16000	16000	16000	16000	16000
28	34331300-45	Անվադողի տափօղակ/гайка/ գայկա						4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000
29	34331300-46	Անվադողի շպիլկա						4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000
30	34331300-47	Կռիլո դիմացի աջի						25000	25000	25000	25000	25000	25000	25000	25000
31	34331300-48	Հետևի արգելակման բարաբան						50000	50000	50000	50000	50000	50000	50000	50000
32	34331300-49	Դիմացի ապակի						32000	32000	32000	32000	32000	32000	32000	32000
33	34331300-50	Հետևի կամրջակի տալերչնի						47000	47000	47000	47000	47000	47000	47000	47000
34	34331300-51	Կարդան						35000	35000	35000	35000	35000	35000	35000	35000
35	34331300-52	Փոխանցման տուփի 2-րդ լիսեռ/вал/						28000	28000	28000	28000	28000	28000	28000	28000
36	34331300-53	Եռաբաշխիչ/трайник/ ռազդատկայի						42000	42000	42000	42000	42000	42000	42000	42000
37	34331300-54	Առաջնամասի անվակունդ/ступица/						25000	25000	25000	25000	25000	25000	25000	25000
38	34331300-56	Շարժիչի պաշտպանիչ						25000	25000	25000	25000	25000	25000	25000	25000
39	34331300-62	Անվադող ձմեռային						240000	240000	240000	240000	240000	240000	240000	240000
40	34331300-67	Շարժիչի մոմեր/свеча/						20000	20000	20000	20000	20000	20000	20000	20000
41	34331300-70	Խլացուցիչի վերջնամասի կտորը						25000	25000	25000	25000	25000	25000	25000	25000
42	34331300-72	Առջևի կամրջակի վերևի շառավոյ						16000	16000	16000	16000	16000	16000	16000	16000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

Կապանի համայնքապետարան
Ք. Կապան, Ա.Մանուկյան 5ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900312241038
ՀՎՀՀ 09426088

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Ա/Ձ Արթուր Մաթևոսյան
Ք. Կապան,Մ.Ստեփանյան43-18
Ամերիաբանկ
ՀՀ 1570014108750100
ՀՎՀՀ 78637352

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 01 » հունիս 2018թ. կնքված
<<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՊՁԲ-18/9>> ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 01 » հունիս 2018թ. կնքված
<<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՊՁԲ-18/9>> *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն